ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ծնվել է 1963թ. սեպտեմբերի 10-ին Երևանում:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

1980-1986 թթ. - արաբերեն լեզվի և գրականության մասնագիտությամբ **Բակալավրի եւ Մագիստրոսի կոչում** (դիպլոմ՝ գերազանցությամբ), Արևելագիտության ֆակուլտետ, Երեւանի պետական համալսարան:

1993թ. փետրվար-հուլիս - **քաղաքագիտական ինտենսիվ դասընթացներ /Intensive Political Science Course/,** Հայկազեան համալսարան, Բեյրութ, Լիբանան:

1994 թ. մայիս-օգոստոս - **Դիվանագիտական դասընթաց /Diplomats Course/** Օքսֆորդի, Լիդսի, Էդինբուրգի համալսարաններում, Միացյալ Թագավորություն: Ինտենսիվ դասընթացներ դիվանագիտություն եւ միջազգային իրավունք թեմաներով:

1999 թ. - **Պատմական գիտությունների թեկնածու**, Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) Արեւելագիտության ինստիտուտ: Ատենախոսության թեման՝ «Սիրիա-ամերիկյան հարաբերությունները 1967-1996թթ.»:

2008թ. - **Պատմական գիտությունների դոկտոր**: Հայաստանի Հանրապետության ԳԱԱ, Արեւելագիտության ինստիտուտ: Դոկտորական ատենախոսության թեման՝ «Սիրիայի տեղն ու դերը արաբ-իսրայելական հակամարտությունում (1946-2000թթ)»:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁԸ

1986 - 1988 թթ. - Երեւանի պետական համալսարանի արտաքին կապերի վարչության ավագ տեսուչ, Երեւանի պետական համալսարանի եւ այլ բուհերի միջև համագործակցության ուղղությամբ երկկողմ համաձայնագրերի իրականացման գիտական պատասխանատու:

1988 - 1992թթ. - Երեւանի պետական համալսարանի արտաքին կապերի վարչության, օտարերկրյա ուսանողների բաժանմունքի պետ:

1994 - 1995թթ. - Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության Առաջին Եվրոպական վարչության կցորդ:

1995 թ. հունվար 1996 թ. մարտ - Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության Երկրորդ Եվրոպական վարչության երրորդ քարտուղար:

1995-1996 թթ. - Բուլղարիայում Հայաստանի Հանրապետության դեսպանության երկրորդ քարտուղար:

1996-1997թթ. – Հունաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանության երկրորդ քարտուղար /հյուպատոս/:

1997-1999թթ. Հունաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանության առաջին քարտուղար (դեսպանի տեղակալ):

1999-2000թթ. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության Աշխատակազմի ղեկավար:

2000թ. նոյեմբեր - 2004թ. հոկտեմբեր - Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության Ասիայի, Խաղաղ Օվկիանիայի եւ Աֆրիկայի վարչության պետ:

2004-2009 թթ. Եգիպտոսի Արաբական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության Արտակարգ եւ լիազոր դեսպան:

2008-2009 թթ. - Արաբական պետությունների լիգայում Հայաստանի Հանրապետության Լիազոր ներկայացուցիչ:

2008-2009 թթ. - Աֆրիկյան միությունում Հայաստանի Հանրապետության Մշտական դիտորդ:

2009-2013թթ. - Իտալիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության Արտակարգ եւ լիազոր դեսպան: Համատեղության կարգով Սլովենիայում, Խորվաթիայում, Մալթայում և Պորտուգալիայում ՀՀ դեսպան (նստավայրը `Հռոմ):

2013 թվականից- Հայ-իտալական «Դաղիվանք» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ:

Ունի արտակարգ եւ լիազոր դեսպանի դիվանագիտական աստիճան:

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

1999 - 2004 թթ.- Երեւանի պետական համալսարանի Արեւելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի դոցենտ:

2003 թ. մարտ - 2004 թ. հոկտեմբեր - ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի Ասիական երկրների բաժնի վարիչ /համատեղության կարգով/:

2014 թվականից- Հայ-ռուսական համալսարանի, Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի, միջազգային հարաբերությունների և համաշխարհային քաղաքականության ամբիոնի պրոֆեսոր:

2016 թվականի հունվարից - ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրենի խորհրդական միջազգային համագործակցության հարցերով և «Ընդհանուր պատմության» բաժնի ավագ գիտաշխատող:

Հայ-ռուսական համալսարանի, Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի գիտական խորհրդի անդամ է:

ՀՀ ԳԱԱ «Լրաբեր Հասարակական գիտությունների» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ է:

Նյու Յորքի Քաղաքագիտության Ակադեմիայի անդամ է /Academy of Political Science, New York/:

Հռոմի Աշխարհաքաղաքական ուսումնասիրությունների և Հարակից գիտությունների ինստիտուտի (Istituto di Alti Studi in Geopolitica e Scienze Ausiliare, IsAG) միջազգային գիտական կոմիտեի անդամ է:

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի «Արաբագիտական ուսումնասիրություններ» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ է:

Հեղինակ է շուրջ 25 հոդվածների և 6 մենագրությունների, այդ թվում հայերենով ԲՈՒՀ-երի ուսանողների համար ուսումնական ձեռնարկի՝ «Արաբական աշխարհի նոր և նորագույն պատմություն», Մերձավոր Արևելքի և միջազգային այլ հիմնախնդիրների վերաբերյալ:

Օտար լեզուներ՝ ռուսերեն, անգլերեն, արաբերեն-կատարյալ, իտալերեն, ֆրանսերեն, հունարեն եւ պարսկերեն- բառարանով :

Ամուսնացած է ունի մեկ դուստր: